ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ • НАШИ ЮБИЛЯРЫ

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Ծատուր Պավելի Աղայանի ծննդյան 70 և աշխատանքային, գիտամանկավարժական ու հասարակական-քաղաքական գործունեության 50 տարին:

Ծ. Պ. Աղայանը ծնվել է 1911 թ. դեկտեմբերի 30-ին, ներկայիս Ադրբեջանական ՍՍՀ Դաշքենանի շրջանի Փիփ (Զազիկ) գյուղում: 1917 թ. Աղայանների ընտանիքը տեղափոխվում է Շամխորի շրջանի Դոլիցիոն (այժմ Մարտունի) գյուղը և այնտեղ մշտական բնակություն հաստատում: Վերջացնելով տարրական դպրոցը, Աղայանը 1926 թ. ընդունվում է Գյանջայի (այժմ Կիրովաբաղ) մանկավարժական տեխնիկումը, որն ավարտում է 1930 թ. և անցնում աշխատանքի Շամխորի շրջանի Մարտունի, Զազիր և Զարդախլու գյուղերի դպրոցներում՝ որպես ուսուցիչ և ուսմասվար: Մտնելով կոմերիտմիության շարքերը և ավարտելով Գյանջայի ԼԿԵՄ քաղաքային կոմիտեին կից քաղաքական դասընթացը՝ նա ընդգրկվում է նաև հասարակական աշխատանքի մեջ:

1933 թ. Ծ. Պ. Աղայանը ընդունվում է Մոսկվայի պատմափիլիսոփայական-գրական ինստիտուտը և 1937 թ. հաջող կերպով ավարտում նրա պատմության ֆակուլտետը, իսկ մինչ այդ ավարտում է նաև Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը: Այնուհետև նա աշխատում է Լեռնային Ղարաբաղում և Բաքվում՝ որպես միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչ, ուսմասվար, շրջանային լուսբաժնի տեսուչ և ապա մարզային լուսբաժնի մեթոդիստի վարիչ: 1938 թ. Աղայանը ընդունվում է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան՝ ՍՍՀՄ ժողովուրդների պատմության մասնագիտության գծով և 1941 թ. հունիսին համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական դիսերտացիան, նվիրված ադրբեջանական առաջին լուսավորիչ-պատմաբան Ա. Կ. Բաքիխանովին: Այնուհետև Աղայանը գիտամանկավարժական աշխատանքի է անցնում Բաքվում: Այստեղ նա վարում է Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի պրոռեկտորի պաշտոնը, դասախոսություններ կարդում նույն ինստիտուտում և Ադրբեջանի Կիրովի անվան պետական համալսարանում ՍՍՀՄ ժողովուրդների պատմության դասընթացից և հատուկ մասնագիտական առարկաներից: Միաժամանակ գիտահետազոտական աշխատանք է կատարում Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ զբաղեցնելով ավագ գիտաշխատողի և գիտական քարտուղարի պաշտոնները:

1942 թ. Ծ. Պ. Աղայանը մտնում է կոմունիստական կուսակցության շարքերը և էլ ավելի եռանդով մասնակցում հասարակական-կուսակցական աշխատանքներին: Հանրապետական և քաղաքային բերբերում ու ամսագրերում նա սիստեմատիկաբար հանդես է գալիս հայրենա-

սիրական, Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամության պատմության էջերին նվիրված հրապարակախոսական ու պրոպագանդիստական հոդվածներով: Նույն թեմաներով նա դասախոսություններ ու զեկուցումներ է կարդում հանրապետության աշխատավորների, մտավորականների և զինվորականների համար:

1948 թ. հունվարին Ծ. Պ. Աղայանը Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանում է «1870 թ. գյուղացիական ռեֆորմը Ադրբեջանում» թեմայով դոկտորական դիսերտացիան և ստանում պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ երկու տարի հետո՝ նաև պրոֆեսորի կոչում:

Շուտով Ծ. Պ. Աղայանը Բաքվից տեղափոխվում է Երևան, որտեղ սկսում է նրա գործունեության նոր շրջանը: Նա նշանակվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի սովետական հասարակարգի պատմության բաժնի վարիչ: Միաժամանակ աշխատում է Երևանի պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: 1950 թ. ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ և նշանակվում ՍՄԿԿ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտորի գիտական գծով տեղակալ: 1950—1954 թթ. եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի գիտության և կուլտուրայի բաժնի վարիչ: 1954—1961 թթ. ղեկավարում է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժինը: 1961—1968 թթ. վարում է ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտորի պաշտոնը: 1968 թ. ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս և ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար: Այս պաշտոնում աշխատում է մինչև 1977 թ.: Այժմ նա գլխավորում է Երևանի պետական համալսարանի կուսակցության պատմության ամբիոնը:

Ծ. Պ. Աղայանը չափազանց բեղմնավոր պատմաբան է: Նա հեղինակ է բազմաթիվ աշխատությունների, այդ թվում՝ 30-ից ավելի մենագրությունների: Այդ աշխատություններն ընդգրկում են հայ ժողովրդի պատմության XIX և XX դդ. բարդ ու խրթին պրոբլեմները, ինչպես նաև Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամության պատմությունն իր ամբողջությամբ, այդ ժողովուրդների, մասնավորապես ադրբեջանցիների անցյալի ակտիվ դեմքերի գործունեությունը, պատմության կարևորագույն շրջանների ու դեպքերի գիտական լուսաբանումը: Ծ. Պ. Աղայանի գրչին ևս պատկանում նաև մի շարք աշխատություններ նվիրված ժամանակակից հրատապ հարցերին:

Հիշատակենք Աղայանի ուսումնասիրություններից մի քանիսը:

Ծ. Պ. Աղայանի անդրանիկ մենագրությունը լույս է տեսել 1948 թ. Բաքվում, ռուսերեն: Այն գրված է նրա թեկնածուական դիսերտացիայի հիման վրա, նվիրված է Աբբաս Կուլի Բաքիխանովին: Այստեղ հեղինակը առաջին անգամ մարքսիստական դիրքերից տվել է Ա. Կ. Բաքիխանովի գիտական կենսագրության և բազմակողմանի գործունեության պատկերը, ներկայացրել նրա առաջադեմ հայացքների հիմնական կողմերը, նրա կապերը Ռուսաստանի, ռուս, հայ և վրացի առաջադեմ մտավորականների հետ և այլն:

Ադրբեջանի պատմության պրոբլեմներին է նվիրված նաև Ծ. Պ. Աղայանի երկրորդ աշխատությունը՝ «1870 թ. գյուղացիական ռեֆորմը Ադրբեջանում», որը լույս է տեսել 1956 թ. Բաքվում, նույնպես ռուսերեն: Այս աշխատության մեջ հեղինակը հարուստ փաստերի մարքսիստական վերլուծմամբ, պատմական լայն ֆոնի վրա վերստեղծել է ռեֆորմի բարդ ու յուրահատուկ պատմությունը: Գրքում հանգամանորեն բացահայտված են ռեֆորմի պատճառները ու նախապատրաստման ընթացքը, բովանդակությունն ու էությունը, նշանակությունն ու հետևանքները:

Ծ. Պ. Աղայանի ուշադրության կենտրոնում են գտնվում հայ և Անդրկովկասի մյուս եղբայրական ժողովուրդների ազատագրական պայքարի և հեղափոխական շարժման հարցերը, սովետական կարգերի հաստատման և սոցիալիստական շինարարության պատմության պրոբլեմները: Այդ կարգի աշխատություններից հիշենք, օրինակ, նրա «Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» (1955 թ.), «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը» (1957 թ.), «Մեծ Հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորների պայքարը հանուն սովետական իշխանության հաղթանակի» (1962 թ., ռուսերեն), «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասյան սովետական հանրապետությունների ստեղծումը» (1976 թ., ռուսերեն) գործերը, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» (1976 թ.) մեծածավալ աշխատությունը: Վերջերս (1981 թ.) Մոսկվայում ռուսերեն լույս է տեսել «Սովետական իշխանության հաղթանակը և հայ ժողովրդի վերածնունդը» աշխատությունը:

Զգալի է Ս. Պ. Աղայանի ավանդը Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուսումնասիրության ասպարեզում: Նրա խմբագրությամբ է ստեղծվել «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» ծավալուն կոլեկտիվ աշխատությունը, որը լույս է տեսել 1967 թ.: Նա ակտիվորեն մասնակցել է նաև «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծեր» (1967 թ.) և «Սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում» (1971 թ.) ռուսերեն գրված կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը որպես հեղինակներից և խմբագիրներից մեկը:

Ս. Պ. Աղայանը «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակի 5, 6 և 7-րդ հատորների պատասխանատու խմբագիրն ու մի շարք բաժինների հեղինակն է: Նրա անմիջական մասնակցությամբ ու խմբագրությամբ են կազմվել և ռուսաց լեզվով հրատարակվել «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (հատոր I, 1977 թ., հատոր II, 1978 թ.) փաստաթղթերի ժողովածուները:

Ս. Պ. Աղայանը լույս է ընծայել մի շարք գործեր հայ-ռուսական կապերի և Անդրկովկասի ժողովուրդների բազմադարյան բարեկամության վերաբերյալ: 1978 թ. Մոսկվայում լույս տեսավ «Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական բախտում» աշխատանքը, իսկ 1970—1981 թթ.՝ «Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը» հատահատոր գիրքը: Այս աշխատությունները ունեն ճակատագրական հաղթական-դաստիարակչական նշանակություն:

Հեղինակը տպագրել է նաև մի շարք աշխատություններ նվիրված մեծ Լենինի հայ զինակիցներին և աշակերտներին՝ Ս. Սպանդարյանին, Ա. Մելիքյանին, Բ. Բորյանին, Հ. Թոշկյանին (Դալին), Մ. Կասյանին և այլոց: Ուշադրության արժանի է Ս. Պ. Աղայանի խմբագրական աշխատանքը կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության ականավոր գործիչներ Ա. Մյասնիկյանի, Ա. Խանջյանի, Ս. Կասյանի և այլոց աշխատությունների հատընտիրները հրատարակելու գործում:

Ն. Պ. Աղայանը երկար տարիներ խմբագրել է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիրը» (նախագայում՝ «Լրաբերը»), զետեղելով նրանց էջերում բազմաթիվ հոդվածներ: Նրա հոդվածները տպագրվել են նաև միութենական Ակադեմիայի հասարակական գիտությունների կենտրոնական օրգաններ *«Вопросы истории»* և *«История СССР»* հանդեսներում: Աղայանը ՍՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից ռուսերեն հրատարակվող «ՍՍՀՄ պատմության» 12 հատորներից բաղկացած ֆունդամենտալ աշխատության գլխավոր խմբագրական խորհրդի անդամ ու որոշ բաժինների հեղինակակիցն է:

Ակադեմիկոս Ս. Պ. Աղայանը զգալի լումա ունի նաև երիտասարդ գիտական կադրերի պատրաստման ասպարեզում: Նրա ղեկավարությամբ ընկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել 50-ից ավելի ասպիրանտներ, որոնցից 10-ը պաշտպանել են նաև դոկտորական դիսերտացիաներ: Նա Երևանում, Մոսկվայում, Թբիլիսիում և Բաքվում բազմիցս հանդես է եկել որպես ընկնածուական և դոկտորական դիսերտացիաների պաշտոնական ընդդիմախոս, գրախոսել է մեծ թվով գրքեր և այլ գործեր, ղեկավարել է գիտական աստիճան շնորհող գիտխորհուրդներ: Այժմ նա գլխավորում է Երևանի պետական համալսարանի ՍՄԿԿ գծով գիտական աստիճան շնորհելու մասնագիտացված խորհուրդը:

Զգալի է ակադեմիկոս Ս. Պ. Աղայանի ծառայությունը սովետական պատմագիտության նվաճումների բանավոր պրոպագանդման, նրա մարքսիստական սկզբունքների պաշտպանման ասպարեզում: Նա բազմիցս հանդես է եկել զեկուցումներով ու ելույթներով պատմագիտության տարբեր ճյուղերի շուրջ ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան լսարաններում: Աղայանը մասնակցել է բազմաթիվ միջազգային, միութենական, ռեգիոնալ և հանրապետական պատմագիտական սիմպոզիումների, նստաշրջանների, կոնֆերանսների և այլ գիտաժողովների:

Ս. Պ. Աղայանը նեղ, ինքնապարփակ կաբինետային գիտնական չէ: Նա նաև ակտիվ հասարակական գործիչ է: Բազմակողմանի գիտական աշխատանքը հայրենանվեր գիտնականը հաջողությամբ զուգորդում է տարբեր մասշտաբի ու բնույթի կուսակցական, հասարակական պարտականությունների ու հանձնարարությունների հետ: 1950—1954 թթ. նա եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամության թեկնածու, 1963—1971 թթ.՝ Կենտկոմի անդամ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ և գիտության ու լուսավորության հանձնաժողովի նախագահ, 1971—1981 թթ.՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի վերստուգիչ հանձնաժողովի անդամ: Նա ակտիվ մասնակցում է նաև «Գիտելիք» ընկերության աշխատանքներին: Եղել է համամիութենական «Գիտելիք» ընկերության հիմնադիր համագումարի և Հայաստանի այդ ընկերության համագումարների պատգամավոր: Հանախակի դասախոսություն-

ներ ու զեկուցումներ է կարդում հանրապետության աշխատավորների և մտավորականների համար՝ պատմության և մեր կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականության հարցերի մասին:

Ծ. Պ. Աղայանը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային կից ստեղծված և ակադեմիկոս Ի. Ի. Մինցի կողմից գլխավորվող Հոկտեմբերյան հեղափոխության խորհրդի հայկական սեկցիայի նախագահն է: Այդ սեկցիան կոորդինացնում է ազգային հարցի լուծման պրոբլեմը: Նրա ակտիվ մասնակցությամբ ստեղծվել են մի շարք կարևոր կոլեկտիվ գործեր մեծ Հոկտեմբերի և ազգային հարցի լուծման տարբեր ասպեկտների վերաբերյալ:

Ծ. Պ. Աղայանի բազմակողմանի ու արդյունավետ աշխատանքը բարձր է գնահատվել հանրապետության կուսակցական, սովետական և հասարակական վերադաս օրգանների ու կազմակերպությունների կողմից: Այդ են վկայում նրան շնորհված «Գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչումը, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշանները, կառավարական մի շարք մեդալները, ՀՍՍՀ Գերագույն սովետի, միութենական և հանրապետական «Գիտելիք» ընկերության և այլ կազմակերպությունների կողմից ստացած պատվոգրերը և այլ պարգևներ ու խրախուսանքներ:

Ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը իր 70-ամյակը բոլորում է ստեղծագործական նորանոր մտահղացումներով: Ի սրտե ցանկանք նրան քաջառողջություն, երջանկություն և նոր հաջողություններ իր գիտական, մանկավարժական և հասարակական գործունեության մեջ:

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Ա. ԹԱՎԱՔԱՀՅԱՆ